ԴԻՄՈՒՄ

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ, ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը խորին մտահոգություն է արտահայտում, որ վերջին ժամանակներս իրադրության կտրուկ սրման հետևանքով Խորհրդային Հայաստանը և ՂՂԻՄ-ը հայտնվել են անկանխատեսելի հետևանքներով հղի կացության մեջ, որին հանգեցրել է շրջափակումը: Հանրապետության առանց այդ էլ ծայրաստիճան բարդ տնտեսական դրությունը՝ կապված ավերիչ երկրաշարժի հետ, էլ ավելի է վատթարացել: Ադրբեջանական երկաթուղով չեն ստացվում ժողովրդատնտեսական բեռներ, շինանյութեր, սննդամթերք, վառելիք: Դրա հետևանքով խախտվում է հանրապետության կենսագործունեության նորմալ ռիթմը, որն առաջացնում է ժողովրդի արդարացի բողոքն ու զայրույթը:

Էլ ավելի լարված է իրավիճակը Լեռնային Ղարաբաղում, որը գտնվում է լրիվ շրջափակման մեջ:

Մեզ խորապես անհանգստացնում է Ադրբեջանական ԽՍՀ տարածքում բնակվող մեր հայրենակիցների կյանքի անվտանգության ապահովման վիճակը:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը դիմում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, պնդելով ձեռնարկել անհապաղ և վճռական միջոցներ Ադրբեջանում բնակվող հայերի անվտանգությունն ապահովելու, երկաթուղու և ավտոճանապարհների շրջափակումը վերացնելու ուղղությամբ, որը հնարավորություն կտա կյանքը նորմալ հունի մեջ դնել ռեգիոնում: